

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023-2024 ուստարի

ՏԱՐԵԿԱՆ

/մասնագիտական մեթոդիավորման կատարած աշխատանքների/

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի մասնագիտական մեթոդիավորման աշխատանքային պլանի համաձայն կատարված են 2023-2024 ուսումնական տարվա համար նախատեսված բոլոր աշխատանքները:

2023-2024 ուսումնական տարվա I կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացվել դեկտեմբեր ամսին՝ առաջին կիսամյակի ավարտին:

Կատարվել են նախատեսված հերթական, ինչպես նաև արտահերթ նիստերը, որոնց ընթացքում քննարկվել են մասնագիտական մեթոդիավորման աշխատանքների արդյունավետության բարձրացման, ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված հարցեր, անցկացվել տարբեր զեկույցներ, խորհրդատվություններ, քննարկումներ:

Մեթոդիավորումների նիստերում պարբերաբար քննարկվել են ՀՀ ԿԳՄՍՆ և ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից ստացված գրությունները, համապատասխան ժամկետներում կատարվել են հանձնարարականները և ուղարկվել գրությունների պատասխանները:

Մեթոդիավորման նախագահի կողմից պարբերաբար վերահսկվել են մասնագիտական մոդուլների, արտադրական ուսուցման և պրակտիկաների՝ թեմատիկ պլաններով նախատեսված ծրագրերի կատարողականը, մոդուլների արդյունքների ամփոփումները, ստուգարքների անցկացման գործընթացը, էլեկտրոնային մատյաններում կատարված գրանցումները, ստուգվել են ուսանողների մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները /ուսանողների կողմից կատարված անհատական գործնական աշխատանքները/, փոխադարձ դասալսումները և այլ աշխատանքներ:

Հանձնախմբի անդամները կատարել են նախատեսված փոխադարձ դասալսումները, մոդուլների ամփոփումները, ստուգարքները՝ ըստ տնօրինության կողմից հաստատած ժամանակացույցերի, ինչպես նաև դասալսումներ են կատարվել դրվածքների ուսումնասիրման համար: Երկրորդ կիսամյակում ուսումնասիրվել է «Համակարգիչների շահագործում» մասնագիտության երկրորդ կիսամյակի մոդուլների և արտադրական ուսուցման դրվածքի ուսումնասիրում: Դրվածքի ուսումնասիրման արդյունքները վերլուծվել են մեթոդիավորման թիվ 11 հերթական նիստում, կազմվել համապատասխան հաշվետվություն:

Ուսումնական տարվա ընթացքում տարբեր բնույթի աշխատանքներ են տարվել սկսնակ դասավանդողների և արտադրական ուսուցման վարպետների հետ /մեթոդական հարցեր, թղթավարություն, էլեկտրոնային մատյանների լրացման կարգ և այլն/, որոնք նպաստել են նրանց աշխատանքային գործընթացի ճիշտ կազմակերպմանը:

Կատարված աշխատանքները քննարկվել և վերլուծվել են մեթոդիավորման նիստերում, տրվել են համապատասխան մեկնաբանություններ, վերլուծություններ և ցուցումներ:

2023-2024 ուսումնական տարվա մասնագիտական մեթոդափափորման նիստերում քննարկվել են նաև ուսումնարանի որակի ապահովման պատասխանատու Հռիփսիմե Մինասյանի կողմից մշակված, ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավմանն ուղղված տարբեր ներքին կանոնակարգեր:

Արտադրական ուսուցման վարպետները, ուսումնական գործընթացից հետ մնացած ուսանողների համար, նյութատեխնիկական բազայով հագեցած, վերազինված ուսումնական արհեստանոցներում պարբերաբար կազմակերպել են անհատական կամ խմբային լրացուցիչ գործնական պարապմունքներ:

Բոլոր մասնագիտությունների վարպետ-դասախոսներն աշխատում են մեծ նվիրումով՝ ուսանողների մոտ սերմանելով սեր ընտրած մասնագիտության հանդեպ: Մասնագետ-վարպետները կարողանում են արդյունավետ օգտագործել ինչպես ուսումնարանի նյութատեխնիկական բազան, այնպես էլ գործատու կազմակերպությունների ռեսուրսները՝ զարգացնելով ուսանողների մասնագիտական կարողություններն ու հմտությունները, պատրաստելով բանիմաց մասնագետներ՝ մրցունակ աշխատաշուկայում իրենց տեղը հետագայում գտնելու նպատակով:

Մասնագիտական մեթոդափափորման անդամները վերանայել, քննարկել և հաստատման են ներկայացրել պետական որակավորման քննությունների հարցաշարերը, որոնց հիման վրա կազմվել և հաստատվել են քննական տոմսերը հետևյալ մասնագիտությունների համար.

- «Համակարգիչների շահագործում»
- «Խոհարարական գործ»
- «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»
- «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում»
- «Ոսկերչություն»

Նորկայացվել են նաև որակավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները, որոնք հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից:

Մասնագիտական մեթոդափափորումը, համագործակցելով կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Կ. Ղարազյոզյանի հետ, ուսումնասիրել է Շիրակի մարզի աշխատաշուկան, հանդիպումներ է ունենցել տարբեր գործատուների հետ և հաշվի առնելով նրանց կարծիքները ներկայացրել է առաջարկ 2024 թվականի ընդունելության վերաբերյալ, որում հիմնական մասնագիտությունները բացի առաջարկվել է 2024-2025 ուսումնական տարում փորձարարական կարգով ներդնել նաև «Ռոբոտաշինություն՝ մեխանիկ - վերանորոգող՝ ռոբոտների և շարժվող սարքերի» մասնագիտությունը:

2023-2024 ուսումնական տարում շարունակվել է փորձարարական կարգով ուսումնարանում ներդրված «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությամբ ուսուցման գործընթացը:

2023-2024 ուստարում «Խոհարարական գործ» մասնագիտության առաջին, երկրորդ և երրորդ կուրսերում շարունակվել է ուսուցումը դուալ համակարգով՝ պահպանելով ուսուցման առանձնահատկությունները:

Ուսումնարանի և գործատու կազմակերպությունների միջև կնքված դուալ ուսուցման ծրագրի իրականացման վերաբերյալ համագործակցության պայմանագրերի հիման վրա ըստ նախատեսվածի կազմակերպվել է «Խոհարարական գործ» մասնագիտության առաջին, երկրորդ և երրորդ կուրսերի ուսանողների թեմատիկ պլաններով նախատեսված տեսական և գործնական ուսուցման և պրակտիկաների անցկացումը:

Ապրիլի 19-ին Հայաստանի Խոհարարների Ասոցիացիան Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացրեց Հայաստանի «Երիտասարդ Ուսանող-Խոհարար» մրցույթի նախնական՝ ուսումնարանային փուլը:

Նշված փուլին մասնակցում էին «Խոհարարական գործ» մասնագիտության 4 ուսանողներ՝

1. Մկրտչյան Արման- «Խոհարարական գործ» III կուրս
2. Շահբազյան Արևիկ-«Խոհարարական գործ» I կուրս
3. Աբգարյան Սպարտակ-«Խոհարարական գործ» I կուրս
4. Մաթևոսյան Նուռիբեկ-«Խոհարարական գործ» I կուրս

Մրցույթի մոդերատորը Արբի Ղարախանին էր:

Մրցույթի ընթացքին հետևում էին հանձնաժողովի անդամներ՝ շեֆ խոհարարներ Տիգրան Ղամբարյանը, Աննա Ավետիսյանը, Գոռ Գաբրիելյանը և Լուսինե Հովհաննիսյանը:

Մրցույթի անցկացման չափանիշները համապատասխանեցված էր Worldskills International մրցույթի ձևաչափին:

Մրցույթի ուսումնարանային փուլի հաղթող ճանաչվեց կրթօջախի առաջին կուրսի ուսանողուհի Արևիկ Շահբազյանը, ով հնարավորություն ստացավ հունիս ամսին կայանալիք Հայաստանի «Երիտասարդ Ուսանող-Խոհարար» 2024թ. մրցույթում ներկայացնել Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը:

Արևիկ Շահբազյանը վերը նշված մրցույթում խոհարարական կրեատիվ տեխնիկայի և ուսեստներ պատրաստելու ժամանակ սննդային նվազագույն թափոններ ունենալու համար UN WFP -ի կողմից պարգևատրվել է հավաստագրով և արժանացել խրախուսանքի, իսկ Հայաստանի Խոհարարների Ասոցիացիայի կողմից մասնակցության հավաստագիր:

Ուսումնական տարվա ավարտին ՀՀ ԿԳՄՍՆ է ներկայացվել 2023-2024 ուստարում «Խոհարարական գործ», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» և «Կահույքի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությունների փորձարարական ծրագրերի արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ:

Կատարված են 2023-2024 ուսումնական տարվա մասնագիտական մեթոդմիավորման աշխատանքային պլանով նախատեսված բաց դասերն ու միջոցառումները, որոնց վերաբերյալ կատարվել են քննարկումներ համապատասխան նիստերում և կազմվել հաշվետվություններ: Իրականացված բաց դասերը, վարպետաց դասերը, մասնագիտական ֆիլմերի դիտում-քննարկումները և այլ միջոցառումներ լուսաբանվել են ուսումնարանի կայքէջում, սոցիալական ցանցերում: Կազմվել է անցկացված բաց դասերի և միջոցառումների վերաբերյալ հաշվետվություն /կցվում է/:

Ուսումնական տարվա ընթացքում մասնագիտական մեթոդախաղարկումը համագործակցել է հումանիտար և բնագիտամաթեմատիկական մեթոդախաղարկումների, զինղեկի, տնօրենության, ուսանողական և ծնողական խորհուրդների հետ:

Ըստ դասացուցակի և հաստատված ժամանակացույցի ուսումնարանում մայիսի 15-ից սկսվել են երրորդ կուրսերի ուսումնական և նախաավարտական պրակտիկաները:

Ըստ պետական ավարտական քննությունների անցկացման ժամանակացույցի ավարտական կուրսերը հունիսի 3-ից մինչև 10-ը հանձնել են պետական ավարտական քննություններ հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմություն և մաթեմատիկա առարկաներից:

Պետական որակավորման քննությունների ժամանակացույցի համաձայն քննություններն անցկացվել են հետևյալ հերթականությամբ.

- «**Համակարգիչների շահագործում**» – **11.06.2024թ.** /քննությանը մասնակցել է 14 ուսանող, նախագահ՝ Բ. Սարգսյան/
- «**Խոհարարական գործ**» – **12.06.2024թ.** /քննությանը մասնակից 18 ուսանողներից մեկը՝ Սամվել Սքոյանը չի ներկայացել քննության և չի ստացել համապատասխան որակավորում և պետական նմուշի ավարտական փաստաթուղթ/
- «**Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում**» – **13.06.2024թ.** /քննությանը մասնակցել է 15 ուսանող, նախագահ՝ Ա. Մելիքյան/
- «**Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում**» - **14.06.2024թ.** / քննությանը մասնակցել է 9 ուսանող, նախագահ՝ Խ. Սահակյան/
- «**Ոսկերչություն**» - **17.06.2024թ.** /քննությանը մասնակցել է 18 ուսանող, նախագահ՝ Վ. Ղուկասյան/

Որակավորման քննությունների հանձնումից հետո թվով 73 շրջանավարտների շնորհվել է համապատասխան որակավորում և հանձնվել պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/, որից 12-ին՝ գերազանցության.

1. Խաչատրյան Լուսինե - «**Համակարգիչների շահագործում**»
2. Կուրդինյան Միշա - «**Համակարգիչների շահագործում**»
3. Մկրտչյան Կարապետ - «**Համակարգիչների շահագործում**»
4. Գասպարյան Անժելա - «**Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում**»
5. Գասպարյան Անի - «**Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում**»
6. Կիկոյան Մարետա - «**Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում**»
7. Կիրակոսյան Էդգար - «**Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում**»
8. Հարությունյան Սողոմոն - «**Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում**»
9. Սաֆարյան Հակոբ - «**Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում**»

10. Խաչատրյան Վարդան – «Ոսկերչություն»

11. Հակոբյան Նարեկ – «Ոսկերչություն»

12. Սարգսյան Հայկ – «Ոսկերչություն»

Ըստ դասացուցակի և հաստատված ժամանակացույցի մայիսի 30-ից մինչև հունիսի 28-ը պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա անցկացվել են առաջին և երկրորդ կուրսերի ուսումնական /ուսումնարանում/ և արտադրական պրակտիկաները /գործատու կազմակերպություններում/:

Մանկավարժական խորհրդի որոշման համաձայն առաջին և երկրորդ կուրսերում 130-230 դասաժամ, իսկ երրորդ կուրսերում 120-220 ժամ բացակայություն ունեցող ուսանողները՝ ըստ տնօրինության կողմից հաստատված ժամանակացույցի և ըստ մասնագիտությունների վերահանձնել են մասնագիտական մոդուլներ:


Հրայր Դիլանյանը, Դանիել Մովսիսյանը, Մերի Սահակյանը և Տիգրան Մխիթարյանը չեն ներկայացել մասնագիտական մոդուլների վերահանձնմանը և չեն գնահատվել:

«Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող Միխայել Չիչյանը մայիսի 29-ից երկրից բացակայելու պատճառով 2023-2024 ուսումնական տարվա պրակտիկան չի հանձնել ըստ նախատեսված ժամանակացույցի, նրան թույլատրվել է պրակտիկան հանձնելու 2024-2025 ուստարվա սկզբին՝ ՀՀ վերադառնալուց հետո:

Ապրիլի 8-10-ը ներառյալ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում անցկացվել է ՄԿՈՒ հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստման եռօրյա դասընթաց, որին մասնակցել են ուսումնարանի թվով 3 աշխատակիցներ՝ Վլադիմիր Բագրատունին, Անի Պետոյանը, Ահարոն Մելիքյանը:

Ուսումնարանի դասախոսներ Արտաշես Գրիգորյանը և Վլադիմիր Բագրատունին ապրիլի 15-19 ընկած ժամանակահատվածում մասնակցել են «ՏՈՒԿ-ՖԱԱՌԱԼՊ» Տեխնոլոգիական Ռեսուրսային Կենտրոն կրթական հիմնադրամի կողմից իրականացված «Արդյունաբերական համակարգերի ավտոմատացման բազային գիտելիքներ (Robot-00)» մեկշաբաթյա դասընթացին, որի ընթացքում նրանք ներկայացրել են էներգետիկայի, արդյունաբերության ավտոմատացման (ռոբոտաշինություն) բնագավառներում նորարարական դասավանդման մեթոդները, որոնք կարող են օգտագործել իրենց աշխատանքային գործընթացներում:

Մասնագիտական մեթոդմիավորման 2023-2024 ուստարվա աշխատանքները համարել լավ:

Մասնագիտական մեթոդմիավորման նախագահ՝  Ա. Ղանդիլյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐԷՆՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՆ» ՊՈԱԿ-ՈՒՄ 2023 - 2024 ՈՒՍԱՐՎԱ I ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Միջոցառման անցկացման վայրը և օրը	Մասնակիցների թիվը	Պատասխանատուներ	Միջոցառման նպատակը
1.	Այցելություն	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարարան 24.10.2023թ. 25.10.2023թ. 26.10.2023թ-1 26.10.2023թ-2 27.10.2023թ	Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության III կուրս 8 մասնակից	Դասավանդող՝ Վ. Բազրատունի	<ul style="list-style-type: none"> ✓ Այցելություն Ամասիա համայնք, գյուղ՝ Գտաշեն Իրականացվել է 360 լ տարողությամբ ջրատաքացուցիչ կայանի տեղադրում ✓ Այցելություն Աշոցք համայնք, գյուղ՝ Մեծ Սեպասար Իրականացվել է 2.2 կՎտ հզորությամբ ֆոտովոլտային կայանի տեղադրում ✓ Այցելություն Աշոցք համայնք, գյուղ՝ Բավրա Իրականացվել է 8 կՎտ հզորությամբ ֆոտովոլտային կայանի հողանցման կոնտուրների տեղադրում և ինվերտորների մոնտաժում, ֆոտովոլտային վահանակների հենարանի/կարկասի/ յուղազրկում, ներկում ✓ Այցելություն Ախուրյան համայնք, գյուղ՝ Գետք Իրականացվել է 200 լ և 250 լ տարողությամբ ջրատաքացուցիչների կայանների տեղադրում

2	<p align="center">Բաց դաս «Կիբերանվտանգություն»</p>	<p>Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարարան, 27.10.23թ.</p>	<p>Համակարգիչների շահագործում՝ Օպերա տոր համակարգչի III կուրս 14 մասնակից /ընդհանուր թվով 21 ներկաներ/</p>	<p>Դասավանդող՝ Հ.Վարդանյան</p>	<ul style="list-style-type: none"> ✓ Ընդլայնել թեմայի շուրջ ուսանողների հետաքրքրությունները ✓ Հարստացնել մասնագիտական գիտելիքների պաշարը ✓ Սովորեցնել ճիշտ կողմնորոշվել ինֆորմացիոն տարածության մեջ/Web-բրաուզերներ/ ✓ Չարգացնել օնլայն-տեխնոլոգիաների պատասխանատու օգտագործումը ✓ Ձևավորել ինֆորմացիոն մշակույթ <ul style="list-style-type: none"> ○ Ձևավորել անհրաժեշտ ինֆորմացիայի ինքնուրույն ձեռք բերման կարևորություն Դաստիարակել կարգապահություն «համացանցային աշխատանքի» ժամանակ
3	<p align="center">Բաց դաս «Կտրվածքը կերպարի որպես կարևորագույն մաս»</p>	<p>Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարարան, 04.12.23թ.</p>	<p>«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» I ,II կուրս 13 մասնակից /ընդհանուր թվով 25 ներկաներ/</p>	<p>Դասավանդող՝ Ա. Ղանդիլյան</p>	<ul style="list-style-type: none"> ✓ Հարստացնել մասնագիտական գիտելիքները ✓ Ցուցադրել մասնագիտական կարողություններ. ✓ Կարևորել մազերի առավել շքեղ և արտահայտիչ դարձնելու առավելությունը ✓ Չարգացնել ինքնուրույն աշխատելու և հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններ ✓ Ձևավորել գեղագիտական ճաշակ և սերմանել գեղեցիկը գնահատելու կարողություն

4	<p style="text-align: center;">Բաց դաս</p> <p>«Արևային ֆոտովոլտային վահանակների դերն ու նշանակությունը ոռոգման աշխատանքներում»</p>	<p style="text-align: center;">Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարարան, 20.02.2024թ.</p>	<p style="text-align: center;">«Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության III կուրս 8 մասնակից /ընդհանուր թվով 15 ներկաներ/</p>	<p style="text-align: center;">Դասավանդող՝ Վ. Բագրատունի</p>	<ul style="list-style-type: none"> ✓ Ներկայացնել արևային ֆոտովոլտային վահանակների կիրառման բնագավառները ✓ Ներկայացնել ոռոգման աշխատանքներում արևային ֆոտովոլտային վահանակների կարևորությունը ՀՀ տնտեսության զարգացման գործում ✓ Կատարել հաշվարկներ ✓ Ձևավորել հետաազոտական աշխատանքներ կատարելու կարողություններ ✓ Զարգացնել մտածողություն, հնարամտություն ✓ Հնարավորություն ընձեռել մասնագիտական գիտելիքները արդյունավետ և նպատակային ձևով կիրառել հետագայում
5.	<p style="text-align: center;">Այցելություն</p>	<p style="text-align: center;">Ամասիայի վերականգնվող արևային էներգիայի կայան 30.11.2022թ .</p>	<p style="text-align: center;">«Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությամբ II և III կուրսերի ուսանողներ /ընդհանուր թվով 10 ներկաներ/</p>	<p style="text-align: center;">Կազմակերպիչ՝ Ա.Նազարյան</p>	<ul style="list-style-type: none"> ✓ Ծանոթանալ կայանի աշխատանքներին, ✓ Հարստացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները ✓ Ձևավորել ստացած գիտելիքները գործնականորեն կիրառելու հմտություններ

6	Բաց դասի «Իմ երազանքի վարսերը»	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարարան, 12.12.23թ.	Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում վարսահարդար» III կուրս 10 մասնակից /ընդհանուր թվով 22 ներկաներ/	Դասավանդող՝ Լ.Հովհաննիսյան	<ul style="list-style-type: none"> ✓ Ընդլայնել թեմայի շուրջ ուսանողների հետաքրքրությունների շրջանակը ✓ Հարստացնել մասնագիտական գիտելիքների պաշարը/վարսերի գանգրացում/ ✓ Ձևավորել գեղագիտական ճաշակ ✓ Ջարգացնել մասնագիտական կարողությունները ✓
---	---	--	---	---	---


2023 - 2024 ՈՒՍՏԱՐԻ II ԿԻՍԱՄՅԱԿ

1	Բաց դաս Համաշխարհային խոհանոցի գաղտնիքները»	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարարան, 28.02.2024թ.	«Խոհարարական գործ՝ խոհարար» III կուրս 17 մասնակից /ընդհանուր թվով 20 ներկաներ/	Դասավանդող՝ Հ.Մաղաքյան	<ul style="list-style-type: none"> ✓ խորացնել ուսանողների ձեռք բերած գիտելիքները համաշխարհային խոհանոցի ✓ առանձնահատկությունների և որոշ ուտեստների ծագումնաբանության վերաբերյալ, ✓ զարգացնել անկաշկանդ աշխատելու հմտություններ, ✓ ձևավորել արագ կողմնորոշվելու, ժամանակի ճիշտ կառավարման հմտություններ:
---	--	--	--	---	---

2	<p>Բաց դաս «Բնական քարերը և ոսկերչությունը»</p>	<p>Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարարան, 02.04.2024թ.</p>	<p>Ոսկերչություն՝ ոսկերի չ» մասնագիտության III կուրս 18 մասնակից /ընդհանուր թվով 30 ներկաներ/</p>	<p>Դասավանդող՝ Ա. Բաղդասարյան</p>	<ul style="list-style-type: none"> ✓ Խորացնել ոսկերչական քարերի մասին ուսանողների ստացած գիտելիքները ✓ Ցուցադրել ուսանողների՝ ձեռակերտ աշխատանքները՝ ոսկերչական քարերով զարդերն ու իրերը ✓ Ներկայացնել ոսկերչական քարերով զարդերի պատրաստման տեխնոլոգիան, անհրաժեշտ գործիքները և անվտանգության տեխնիկայի տիպային կանոնները ✓ Ներկայացնել ոսկերչական քարերի գնահատման մեթոդաբանությունը ✓ Ներկայացնել քարերի տեղադրման եղանակները՝ ըստ ազուցների
3	<p>Բաց դաս ԱԳԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՌՈԲՈՏԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ»</p>	<p>Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարարան, 23.04.24թ</p>	<p>«Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում- ռադիոմեխանիկ» մասնագիտությամբ II կուրս 11 մասնակից /ընդհանուր թվով 20 ներկաներ/</p>	<p>Դասավանդող՝ Հ. Մարմարյան</p>	<ul style="list-style-type: none"> ✓ Հարստացնել մասնագիտական գիտելիքները ✓ զարգացնել ինքնուրույն աշխատելու և հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններ, ✓ ձևավորել գեղագիտական ճաշակ ✓ սերմանել գեղեցիկը գնահատելու կարողություն ծանոթանալ աշխարհահռչակ հայ վարսահարդարների ձեռքբերումներին և

				աշխատանքային գործունեությանը:
4	Բաց դաս «Փայտի լեզուն»	Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարարան, 15.05.24թ	«ԿԱՀՈՒՅՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ, ԿԱՀՈՒՅՔԱԳՈՐԾ I կուրս 14 մասնակից /ընդհանուր թվով 27 ներկաներ/	<ul style="list-style-type: none"> ✓ Խորացնել ուսանողների փայտանյութի և նմանատիպ նյութերի հատկությունների, տեսակների մասին ձեռք բերած գիտելիքները ✓ Ներկայացնել պատմական տարբեր ժամանակաշրջաններում պատրաստված տարատեսակ կահույքների տեսակները, զարգացման պատմությունը ✓ Ներկայացնել փայտանյութերի և նմանատիպ նյութերի մշակման համար նախատեսված ձեռքի գործիքները և հաստոցների տեսակները ✓ Ձևավորել հետաքրքրասիրություն ընտրած մասնագիտության հանդեպ ✓ Ջարգացնել ինքնուրույնություն և հետազոտական աշխատանքներ կատարելու կարողություն

Ծանոթություն.միջոցառումները լուսաբանվել են ուսումնարանի կայք էջում. <https://www.gyumriusumnaran4.am/>

Մասնագիտական մեթոդախաղորման նախագահ՝  Ա. Ղանդիլյան